ՏՄԿ-Ի ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՎԱՐՔԱԳԾԻ ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԸ.

Պատվիրատուի ներկայացուցիչները պարտավոր են.

- պահպանել վարքագծի ընդհանուր ընդունված նորմերը.
- պահպանել հակահրդեհային, սանիտարական, բնապահպանական, ճանապարհային և տեխնիկական անվտանգության կանոնները.
- մուտք/ելք (ավտոմեքենայով և/կամ առանց) միայն հատուկ նշանակված սպասարկման տարածքներով, մուտքերով/ելքերով.
- գտնվել միայն՝ վարձակալած տարածքներում, Պատվիրատուի սարքավորումները պարունակող Մոդուլում, հասարակական վայրերում.
- Մոդուլում գտնվել միայն կոշիկի ծածկոցներով կամ փոխարինող կոշիկներով: Մոդուլից դուրս գալու ժամանակ կոշիկի ծածկոցները պետք է հանվեն և տեղադրվեն հատուկ տարայի մեջ, իսկ կրկին Մոդուլ այցելելիս պետք է կոշիկի նոր կրկին ծածկոցներ հագնել.
- Մնալ միայն Ձեր սարքավորումների մոտ: Արգելվում է շրջել սրահով և մոտենալ այլ պատվիրատուների սարքավորումներին.
- բացել սարքավորումները Մոդուլից դուրս;
- կազմակերպել փաթեթավորման նյութերի և արտադրական թափոնների դուրս բերումը ՏՄԿ-ից և դրանց հեռացումը. Պատվիրատուն՝ Կատարողի համաձայնությամբ, կարող է օգտագործել Տեխնոլոգիական տարածքում գտնվող աղբի տարաները.
- կայանել մեքենաներ Տեխնոլոգիական տարածքում միայն Կատարողի կողմից հատուկ նշանակված վայրերում.
- խնամքով վերաբերվել Կատարողի գույքին.
- երբ Պատվիրատուն սարքավորում է տեղադրում/ապամոնտաժում, աշխատանքը պետք է իրականացվի սարքավորումը ներս/դուրս բերելուց անմիջապես հետո:

Պատվիրատուի ներկայացուցիչներին արգելվում է.

- աղտոտել;
- գտնվել և տեղաշարժվել ՏՄԿ տարածքում առանց թույլտվության
-Փորձել անցնել ՏՄԿ պահպանվող տարածք խուսափելով անցակետը
-ՏՄԿ բերել խմիչք և/կամ սնունդ.
-մուտք գործել ՏՄԿ կամ կրոսս սենյակ՝ ձմեռային արտաքին հագուստով;
-ՏՄԿ պաշտպանվող տարածք անցկացնել հրազեն կամ սառը զենք, պայթուցիկ և պայթունավտանգ նյութեր, հրդեհավտանգ նյութեր (ֆեյերվերկներ, սալյուտներ, պետարդաներ), ուժեղ ազդեցիկ թունավոր, ռադիոակտիվ, հոգեմետ նյութեր, ալկոհոլային խմիչքներ և այլ սպիրտային նյութեր
-Տարածքում, շինություններում և կառույցներում խախտել ընդհանուր կանոնները և մաքրությունը
-ստվարաթուղթ, թուղթ և այլ փաթեթավորման նյութեր պահել ՏՄԿ-ի միջանցքներում,
-ՏՄԿ տարածքում իրականացնել կինո, ֆոտո և վիդեո նկարահանում: Կինո, ֆոտո և վիդեո նկարահանում թույլատրվում է միայն ընկերության Գլխավոր տնօրենի թույլտվությամբ: Հաճախորդը կարող է նկարահանել եթե կադրի մեջ երևում են միայն իր սարքավորումները և պահարանը,
-ցուցադրել և (կամ) տեղադրել որևէ իր՝ իրեն տրամադրված տարածքից դուրս կամ իրականացնել որևէ գործունեություն իրեն տրամադրված տարածքից և (կամ) այն տարածքից դուրս, որտեղ սպասարկվում է տեխնոլոգիական ռեսուրսը.
-ՏՄԿ տարածք իր հետ անցկացնել անձանց, ովքեր այդ թույլտվությունը չունեն, այդ թվում նաև երեխաների:
-ՏՄԿ տարածքում գտնվել ալկոհոլի կամ այլ հոգեմետ նյութերի ազդեցության տակ
-Ծխել չսահմանված վայրում: Այրման հետ կապված աշխատանքներ կատարել առանձ համապատասխան թույլտվության գրանցման
-Իրականացնել հողային աշխատանքներ առանց համապատասխան թույլտվության գրացման
-Գտնվել ՏՄԿ տարածքում սահմանված ժամկետից 30 րոպեյից ավելի, առանց ՏՄԿ ղեկավարի կամ Գլխավոր տնօրենի կողմից լիազորված անձի թույլտվության
-ՏՄԿ տարածքում պահեստային տարածքից դուրս պահել ապրանքանյութական արժեքներ

-Ավտոմեքենայով խոչընդոտել ՏՄԿ պահպանվող տարածք մուտքը

-Կայանել ավտոմեքենաները ՏՄԿ պահպանվող տարածքում և տարածքի դիմաց, շարժիչը թողնել միացված: Պետք է կայանել մեքենաների համար հատկացված կայանատեղիյում, եթե այդպիսին առկա է:

-Չի թույլատրվում ՏՄԿ տարածքում, ավտոմեքենայով շարժման դեպքում գերազանցել 10 կմ

-Խոչընդոտել դեպի գեներատորներ մուտքը, մասնավորապես վառելիքի լիցքավորման հատվածը